



Կ Ա Ն Ա Ն Ց ԵՐԿԽՈՍՈՒԹՅՈՒՆ

«Համալսարանական կրթությանը կանայք»
լրատուի հավելված

ԱՊՐԻԼ-ՀՈՒՆԻՍ, 2012, №10

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

1993 թվականից ի վեր, երբ Հայաստանի Հանրապետությունը վավերացրեց Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին ՄԱԿ-ի կոնվենցիան, երկիրը բռնեց կանանց և տղամարդկանց իրավունքների և հնարավորությունների հավասարության հասնելու ուղին: Այդ նպատակով ջանադիր աշխատանքներ էին կատարվում հասարակական կառույցներում, ձեռնարկվում էին անգամ ազգային ծրագրեր, որոնք, սակայն, մնում էին թղթի վրա:

Հայաստանի Հանրապետության՝ ՄԱԿ-ի Կանանց նկատմամբ խտրականության վերացման կոմիտեին ներկայացրած 3-րդ և 4-րդ միասնական զեկույցի առնչությամբ կոմիտեն իր Եզրափակիչ դիտողություններում (2009 թ.) նշեց, որ շարունակում են խնդրահարույց մնալ գենդերային գիտելիքների տարածումը, երկրի օրենսդրության մեջ կանանց և տղամարդկանց հավասարության սկզբունքի ամրագրումը, կանանց նկատմամբ խտրականությունն արգելող հստակ ու համընդգրկուն իրավական դրույթների բացակայությունը, պետության քաղաքականության ու ծրագրերի մեջ սեռի տեսանկյունից չեզոք ձևակերպումները:

Կոմիտեն կոչ արեց, մասնավորապես, արագացնել գենդերային իրավահավասարության մասին օրենքի ընդունման ընթացակարգը և կանանց ու տղամարդկանց հավասարության սկզբունքն ամրագրել գենդերային հավասարության մասին օրենքի նախագծում, ինչպես նաև ապահովել անուղղակի խտրականության բնույթի և փաստացի հավասարության հայեցակարգի վերաբերյալ տեղեկատվական-բացատրական աշխատանքը կառավարության պաշտոնյաների, դատական իշխանության և հասարակայնության ներկայացուցիչների շրջանում:

2008-2009 թթ. գործնական աշխատանքներ տարվեցին պետության գենդերային քաղաքականության մշակման և կանանց ու տղամարդկանց հավասար իրավունքների ու հավասար հնարավորությունների ապահովման մասին օրենքի նախագիծ մշակելու ուղղությամբ: Հայացակարգի և օրենքի նախագծերը քննարկման ներկայացվեցին օրենսդիր և գործադիր իշխանության մարմիններում և քաղաքացիական հասարակության ինստիտուտներում, կատարված առաջարկների ու դիտողությունների հիման վրա ընդունվեցին այդ փաստաթղթերի նախագծերի վերջնական տարբերակները:

Գենդերային քաղաքականության հայեցակարգը հիմնված է այն գաղափարի վրա, որ ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության ձևավորման նախադրյալը գենդերային հավասարությունն է՝ որպես ժողովրդավարական գերակա արժեք, մարդու հիմնարար իրավունքներից մեկը և սոցիալական արդարության հասնելու նախապայման:

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
(Ընդունվել է ՀՀ կառավարության կողմից
2010 թ. փետրվարի 11-ին)

2009 թ. հանրապետության նախագահը հաստատեց «Եվրոպական հարևանության քաղաքականության Հայաստանի Հանրապետություն-Եվրոպական միություն գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2009-2011 թթ. միջոցառումների ցանկը», որի գերակա խնդիրների և առաջնահերթ միջոցառումների շարքում նշված է (53-րդ կետ). «Շարունակել գենդերային հավասարության մասին իրավական ակտերի լրամշակման և օրենսդրության կատարելագործման գործընթացը: Շարունա-



կել ընտանեկան բռնությունների կանխարգելման և դրանց դեմ մղվող պայքարին ուղղված ջանքերը՝ նախատեսելով համապատասխան կանխարգելիչ միջոցառումներ և պատժամիջոցներ»:

Այդ խնդիրների լուծման համար նախատեսված էր 2009-2011 թթ. ընդունել գենդերային հավասարության մասին հայեցակարգ և իրականացնել այդ հայեցակարգով նախատեսված իրավական բարեփոխումների միջոցառումներ:

2010 թ. փետրվարի 11-ին ՀՀ կառավարությունը հաստատեց գենդերային քաղաքականության

հայեցակարգը, իսկ 2011 թ. մայիսի 20-ին ընդունեց «Հայաստանի Հանրապետության գենդերային քաղաքականության 2011-2015 թթ. ռազմավարական ծրագիրը», որոնց շնորհիվ որոշակի պարտավորություններ են դրված նաև տեղական ինքնակառավարման մարմինների վրա, և էապես սերտացել է այդ մարմինների ու հասարակական կազմակերպությունների համագործակցությունը:

Այդ են վկայում ստորև ներկայացվող հաղորդումները մարզերում կատարված աշխատանքների մասին:

ՀԱՅԵՑԱԿԱՐԳԸ ՀԻՄՔ Է ԾԱՌԱՅՈՒՄ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ



2010 թ. փետրվարի 11-ին ՀՀ կառավարությունը հաստատեց գենդերային քաղաքականության հայեցակարգը, որը հիմնված է այն գաղափարի վրա, որ ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության ձևավորման նախադրյալը գենդերային հավասարությունն է՝ որպես ժողովրդավարական գերակա արժեք, մարդու հիմնարար իրավունքներից մեկը և սոցիալական արդարության հասնելու նախապայման: Այն ուղղված է իրավական, քաղաքական, սոցիալական, տնտեսական և մշակութային պայմանների ստեղծմանը՝ բոլոր ոլորտներում կանանց և տղամարդկանց իրավունքների և

հնարավորությունների իրացման նպատակով:

Հայեցակարգը պետական իշխանության ու տեղական ինքնակառավարման մարմինների ու քաղաքացիական հասարակության ինստիտուտների համար հիմք է ծառայում գենդերային հավասարության ապահովման ծրագրային միջոցառումների մշակման գործում:

Գենդերային հայեցակարգն իրականացնելու նպատակով Արտաշատի քաղաքապետարանում ստեղծվել է կանանց հիմնախնդիրներով զբաղվող հանձնաժողով, որում ընդգրկված են քաղաքում գործող հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներ, ակտիվ կանայք, քաղաքապետարանի բաժնի պետեր, ավագանու անդամներ:

Չնայած կառավարության հանձնարարությամբ մարզպետարաններում ստեղծվել են մարզային հանձնաժողովներ, քաղաքապետարանում ստեղծված հանձնաժողովը մշակել է միջոցառումների ծրագիր՝ ելնելով 2011-2015 թթ. ռազմավարական ծրագրի դրույթներից: Միջոցառումների ծրագրում կարևորվել են գենդերային խնդիրների վերաբերյալ գիտելիքների հաղորդման և մամուլի միջոցով գենդերային հիմնախնդիրների

բարձրացման, բնակչության իրազեկման աշխատանքները:

Կանանց հիմնախնդիրներով զբաղվող հանձնաժողովի աշխատանքներն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով քաղաքային համայնքի ավագանու որոշմամբ բյուջեում նախատեսվել է գումար, որը ծախսվում է քաղաքի կանանց հարցերի լուծման նպատակով:

Գենդերային վերլուծություն կատարելիս հստակ երևում է քաղաքի գենդերային պատկերը. քաղաքապետարանում 8 բաժնի պետերից 5-ը կանայք են, քաղաքի 6 դպրոցների տնօրենները կանայք են, նոտարական 2 գրասենյակների պետերն էլ կանայք են, առողջապահության բնագավառում ունենք կին փոխտնօրեններ, բաժանմունքի վարիչներ, ունենք նաև բանկի կին կառավարիչ:

Քաղաքում գենդերային քաղաքականության հայեցակարգն իրականացնելու նպատակով քաղաքապետարանում կազմակերպվում են տարբեր միջոցառումներ՝ կլոր սեղաններ, մեկօրյա սեմինարներ, որոնց շնորհիվ լսելի է դառնում կանանց ձայնը, հայտնի են դառնում նրանց մտորումներն ու հոգսերը:

Քանի որ քաղաքապետարանը չի կարող միայնակ իրակա-



նացնել կառավարության կողմից մշակված միջոցառումների ռազմավարական ծրագիրը, համագործակցում է ՀԿ սեկտորի հետ, օգտագործում քաղաքացիական հասարակության կառույցների ներուժը, այդ թվում՝ Քաղաքացիական նախաձեռնությունների Արարատի մարզային կենտրոնի, որը ստեղծման օրվանից գտնվում է քաղաքապետարանի շենքում:

Քաղաքում գործում են մոտ 10 հասարակական կազմակերպություններ, որոնցից ուզում են հիշատակել Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան, որն իր գործունեության ընթացքում կանանց լիդերության դպրոցի շրջանակներում իրականացնում է կին լիդերներ կրթելու և դաստիարակելու դժվարին գործը: Արտաշատ քաղաքում կազմակերպվել է կանանց լիդերության երկու դպրոց և երիտասարդ լիդերների մարզային դպրոց: Դպրոցների փորձագետների շարքում ընդգրկվել են նաև քաղաքապետարանի ապարատի աշխատակիցներ:

Այդ դպրոցն ավարտած շրջանավարտները տիրապետում են անհրաժեշտ քաղաքական, իրավական, տնտեսական գիտելիքներին, գենդերային հիմնահարցերին, ինչպես նաև ձեռք են բերում հասարակական-քաղաքական գործունեության կազմակերպման կարողություններ և հմտություններ:

Նախատեսվում է բարձրացնել նաև ապարատի աշխատողների գենդերային կրթական մակարդակը:

Արտաշատի քաղաքապետարանի «Արտաշատ» թերթում, որի խմբագիրը, ի դեպ, կին է, ի թիվս այլոց, լուսաբանվում են գենդերային հիմնախնդիրները, գենդերային հավասարության գաղափարները: Թերթն իր գործունեությամբ նպաստում է հասարակական գիտակցության մեջ կնոջ և տղամարդու իդեալների ձևավորմանը և կնոջ հեղինակության բարձրացմանը:

Քաղաքապետարանի «Արտաշատ» թերթը լիարժեք կատարում է գենդերային հիմ-

նան գործում, աջակցում կանանց տնտեսական ակտիվության բարձրացմանը:

Քաղաքի դպրոցներում անցկացվել են գենդերային գիտելիքների դասընթացներ, իսկ թիվ 5 դպրոցում դասավանդվում է «գենդերային գիտելիքների հիմունքներ» առարկան նախատեսված ծրագրերով և դասագրքերով, ուսումնական և մեթոդական ձեռնարկներով:

Քաղաքապետարանն աջակցում է կանանց և տղամարդկանց առողջության պահպանման հարցերով զբաղվող հասարակական կազմակերպություններին, միավորում կառավարական և հասարակական կազմակերպությունների ջանքերը տեղեկատվական և կրթական ծրագրերի ու առողջ ապրելակերպի մասին հասարակական կարծիքի ձևավորման գործում:

Գենդերային հայեցակարգի իրականացման աշխատանքները տեղեկում ուսումնասիրելու և գնահատելու նպատակով ՀՀ կառավարությունը վարչապետ Տիգրան Սարգսյանի ղեկավարությամբ հայտարարել էր մրցույթ «Լավագույն քաղաքային համայնք» և «Լավագույն գյուղական համայնք» անվանակարգերով: Մրցույթում հաղթող ճանաչված քաղաքային համայնքներից է Արտաշատը, իսկ գյուղական համայնքներից՝ Արարատի մարզի Վերին Դվին գյուղական համայնքը:

ՀՀ վարչապետի մրցանակաբաշխության «Լավագույն քաղաքապետ՝ գենդերային խնդիրների լուծման ուղղությամբ» անվանակարգում հաղթող ճանաչ-

Գենդերային քաղաքականության հայեցակարգը կոչված է նպաստելու հասարակական-քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքի բոլոր ոլորտների և կառավարման բոլոր մակարդակների քաղաքականության մեջ գենդերային չափման՝ որպես հասարակության կայուն, ժողովրդավարական զարգացման և ժողովրդավարական, բաց, սոցիալապես արդար քաղաքացիական հասարակության ու իրավական պետության կայացման ապահովման միջոցի ներառմանը:

Հայեցակարգը պետք է իրականացվի հասարակության լայն շրջանակների ընդգրկմամբ և պետական կառույցների ու քաղաքացիական հասարակության ինստիտուտների սերտ համագործակցությամբ:

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ

նախնդիրների դրական լուսաբանման և կանանց ու տղամարդկանց հավասարության գաղափարների մատուցման առաքելությունը:

Քաղաքապետարանը կարևորում է գենդերային բաղադրիչի ինտեգրումը քառամյա ծրագրում: Յուրաքանչյուր ստորաբաժանում իր ոլորտում պետք է ուշադրություն դարձնի գենդերային քաղաքականությանը:

Քաղաքապետարանը հատուկ ուշադրություն է դարձնում կանանց դերի բարձրացմանը ձեռնարկատիրության զարգաց-



ված Արտաշատի քաղաքապետ Գագիկ Մուրադյանի պատվոգիրը հանձնելու առաքելությամբ Արտաշատում էր Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի նախագահ տիկին Ջեննա Հասրաթյանը:

Այդ օրը քաղաքային համայնքի ավագանու հերթական նիստն էր, որի ավարտից անմիջապես հետո ավագանու անդամների, քաղաքապետարանի ողջ աշխատակազմի ներկայությամբ Ջեննա Հասրաթյանը Արտաշատի քաղաքապետ Գագիկ Մուրադյանին հանձնեց ՀՀ վարչապետի կողմից տրված պատվոգիրը:

Փոխադարձ ողջույնի խոսքերից հետո տիկին Ջեննա Հասրաթյանն իր ուրախությունը հայտնեց այս մրցույթում մեր քաղաքի լավագույնը ճանաչվելու առթիվ՝ միաժամանակ հույս հայտնելով, որ քաղաքապետարանը, քաղաքապետի գլխավորությամբ, այսուհետև ևս կշարունակի այս քաղաքականությամբ առաջնորդվել:

Քաղաքապետն իր խոսքում նշեց, որ այդ պայմանագիրը պարտավորեցնող է, նրա կարծիքով՝ սեպտեմբերին քաղաքում ավագանու ընտրություններում կավելանա կանանց թիվը, և քաղաքապետարանը դեռ

անելիքներ ունի գեներային քաղաքականության իրականացման ուղղությամբ, որի համար կարիք կա տեղերում իրականացնելու խորհրդատվություն: Ցանկալի է, որ քաղաքապետարանի և մարզպետարանի աշխատակիցների համար տեղերում ցույց տրվի մեթոդական, տեղեկատվական օգնություն, և բարձրացվի գեներային գիտելիքների մակարդակը:

Անահիտ Խաչատրյան
Ասոցիացիայի Արարարի քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնի համադասող

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՔԱՅԼԵՐ ՎԱՆԱԶՈՐՈՒՄ



Գեներային իրավահավասարությունը և հետևաբար նաև իրական ժողովրդավարությունն անհնար է առանց տնտեսական և քաղաքական որոշումների ընդունման գործընթացներում կանանց ակտիվ մասնակցության: Պետությունը, դրսևորելով քաղաքական կամք, պետք է իր քաղաքականության նախապատվություններից մեկը հա-

մարի սեռերի հնարավորությունների ապահովումը, նպաստի քաղաքական և սոցիալ-տնտեսական կյանքում գեներային մոտեցումների ներդրմանը: Իսկ դրա անհրաժեշտ հիմքը, արդարացիորեն կարելի է պնդել, գեներային քաղաքականության իրականացումն է մարզերում, քաղաքներում ու փոքր համայնքներում, ինչը հնարավորություն կընձեռի որոշելու հասարակական կյանքի բոլոր ոլորտներում գեներային հավասարության սկզբունքի ներդրմանն ուղղված հետագա գործողությունների ռազմավարությունը:

Գեներային պետական քաղաքականության համակարգված ու նպատակային բարեփոխումների արդյունավետ իրականացման նպատակով Վանաձորում սկսվել ու հետզհետե խորանում է Վանաձորի քաղաքապետարանի ու Ասոցիացիայի Լոռու քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնի, Վանաձորի մասնաճյուղի հա-

մագործակցությունը, որի արդյունքը կարելի է համարել բազմաթիվ միջոցառումների հաջող իրականացումը:

- Վանաձորում 2004-ից գործում է **կանանց լիդերության դպրոց**: Միայն 2011 թ. 27 մարտի և 2012 թ. 25 մարտի են մասնակցել կանանց լիդերության դպրոցին, ընդգրկվել են Վանաձորում գործող տարբեր քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, քաղաքապետարանի և մարզպետարանի, ուսումնական հաստատությունների աշխատակիցներ: Կանանց լիդերության դպրոցի դասընթացները կազմակերպվել են Ասոցիացիայի Վանաձորի մասնաճյուղի, Վանաձորի քաղաքապետարանի, Վանաձորի ավագանու միակ կին անդամի համատեղ մասնակցությամբ:



- Վանաձորում գործում է **Գենդերային կրթության ռեսուրսային կենտրոն**, որի շրջանակներում թիվ 1, 4, 19, 25 միջնակարգ դպրոցներում 2007-ից անցկացվում են «Գենդերային գիտելիքների հիմունքները» դասընթացներ:
- Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտի 4 ֆակուլտետներում 2005-ից անցկացվում են «Գենդերային գիտելիքների հիմունքները», «Գենդերը և տնտեսությունը» դասընթացներ:
- 2006-ից Վանաձորի պետական մանկավարժական ինստիտուտում գործում է նաև **Գենդերային հետազոտությունների կենտրոն**: 2011 թ. գենդերային հիմնախնդիրների տեսանկյունից հետազոտություններ են իրականացվել մշակույթի, սոցիալական, կրթության և առողջապահության ոլորտներում: Հետազոտություններն իրականացվել են Ասոցիացիայի Լոռու մարզային կենտրոնի, Լոռու մարզպետարանի, Վանաձորի քաղաքապետարանի համատեղ մասնակցությամբ, որի համար տրամադրվել է Վանաձորի քաղաքապետարանի դահլիճը, Լոռու մարզպետարանի կողմից կազմակերպվել է մասնակիցների հավաքը, Ասոցիացիայի Լոռու մարզային կենտրոնի կողմից իրականացվել են հետազոտական աշխատանքները:

- 2011 թ. մարզում գործող **Քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնը** Վանաձորում անցկացրել է բազմաթիվ կլոր սեղաններ, քննարկումներ, որոնց ընթացքում հանրությանն է ներկայացվել «Գենդերային քաղաքականության հայեցակարգը», «Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովման մասին» ՀՀ օրենքի նախագիծը:
- Անցկացվել են գենդերային գիտելիքներ հաղորդող բազմաթիվ սեմինար պարամունքներ, որոնց մասնակցել են ուսուցիչներ, ուսանողներ, աշակերտներ, ոստիկանության աշխատողներ, սոցիալական ոլորտի աշխատակիցներ, քաղաքական կուսակցությունների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ, քաղաքապետարանի և մարզպետարանի աշխատակիցներ: Ասոցիացիայի Լոռու մարզային կենտրոնի, Լոռու մարզպետարանի, Վանաձորի քաղաքապետարանի համատեղ մասնակցությամբ, որի համար տրամադրվել է Վանաձորի քաղաքապետարանի դահլիճը, Լոռու մարզպետարանի և Վանաձորի քաղաքապետարանի կողմից կազմակերպվել է մասնակիցների հավաքը, Ասոցիացիայի Լոռու մարզային կենտրոնի

կողմից հրավիրվել են մասնագետներ, կազմակերպվել են հանդիպումներ:

- «Ընդդեմ գենդերային բռնության հարավային կովկասում» ծրագրի շրջանակներում Վանաձորում անցկացվել են իրազեկման հանդիպումներ, որոնց մասնակցել է ավելի քան 500 մարդ:

Համագործակցության ներկա փուլի փորձը, սակայն, հետագայում պետք է վերաիմաստավորվի: ՏԻՄ-երը պետք է աջակցող կողմից անցում կատարեն նախաձեռնող կողմի հարթություն, որին հասնելու ռազմավարական հաջորդ մոտեցումը գենդերային քաղաքականության իրականացման հարցում տեղական ինքնակառավարման մարմինների դերի ու պատասխանատվության ամրագրումն է ՏԻՄ-երի մասին օրենսդրության մեջ համապատասխան ֆինանսական աղբյուրների նախատեսման միջոցով: Այդ պարագայում ՏԻՄ-երը պարտավոր կլինեն հատուկ ուշադրություն դարձնել իրենց տարածքում, իրենց ենթակայության տակ գտնվող կազմակերպությունների աշխատանքում գենդերային զգայուն քաղաքականության իրականացմանը:

Արմենուհի Կյուրեղյան,
Ասոցիացիայի Լոռու քաղաքացիական նախաձեռնությունների կենտրոնի համադասող

Գենդերային հավասարությունը նպաստում է կայուն զարգացմանը, ժողովրդավարական գործընթացների խորացմանը և հասարակության կենսագործունեության կազմակերպմանը՝ բոլոր սոցիալական խմբերի իրական հավասարության, համերաշխության, համագործակցության և հանդուրժողականության հիման վրա, մարդկային ներուժի արդյունավետ օգտագործմանը և կյանքի որակի բարձրացմանը:

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ



ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԳԻՐՆԵՐԸ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՒՇԱԳՐՈՒԹՅԱՆ

ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2010 թվականի փետրվարի 11-ին հավանության արժանացրեց «Գենդերային քաղաքականության հայեցակարգը»՝ հասարակելով իր հավասարությունը գենդերային հավասարության գաղափարախոսությանը: Դա ենթադրում է հավասար պայմանների և հավասար հնարավորությունների ստեղծում կանանց և տղամարդկանց անհատական ներուժի դրսևորման համար՝ ի նպաստ երկրի սոցիալ-տնտեսական, քաղաքական և մշակութային զարգացմանը:

Հաշվի առնելով վիճակագրական տվյալները, համաչափ որոնց՝ 2010 թ. քաղաքային համայնքներում ավագանիների կազմում կանանց տեսակարար կշիռը կազմել է 4.4%, իսկ գյուղական համայնքներում՝ 7.4%, ինչպես նաև նկատվում է կառավարության հանձնարարականը կառավարման բոլոր մակարդակներում գենդերային ծրագրերի մշակման և իրականացման վերաբերյալ, ՀՀ վարչապետին կից Կանանց խորհուրդն առաջարկել է անցկացնել մրցույթ՝ խրախուսելով այն համայնքապետերին, որոնք լավագույնս են ապահովում ՀՀ կառավարության որդեգրած գենդերային քաղաքականության իրագործումն իրենց համայնքներում:

Հաշվի առնելով նաև այն վիճակագրական տվյալները, որոնք փաստում են տնտեսության մեջ կին գործարուների թվի գրեթե 8 անգամ զիջումը տղամարդ գործարուների թվին (2010 թ. կանանց թիվը 100-ի մեջ կազմել է 12), ՀՀ վարչապետին կից Կանանց խորհուրդն առաջարկել է խրախուսել և հանրահռչակել նաև գործարար կանանց:

«Լավագույն համայնքապետ՝ գենդերային խնդիրների լուծման ուղղությամբ» մրցանակաբաշխությունը

Տեղական ինքնակառավարման բնագավառում գենդերային խնդիրների լուծմանն աջակցելու և համայնքային մակարդակում որոշումների ընդունման հարցում կանանց դերը բարձրացնելու նպատակով ՀՀ վարչապետը սահմանել է «Լավագույն քաղաքապետ՝ գենդերային խնդիրների լուծման ուղղությամբ» և «Լավագույն գյուղապետ՝ գենդերային խնդիրների լուծման ուղղությամբ» մրցանակները, որոնց տրվում են քաղաքային (բացառությամբ Երևանից) և գյուղական համայնքների ղեկավարներին:

Համայնքների ընտրությունը կատարում է մրցութային հանձնաժողովը, որի կազմը հաստատում է ՀՀ վարչապետը: Մրցութային հանձնաժողովը համայնքների ընտրությունը կատարում է՝ հիմք ընդունելով համայնքի ավագանու կազմում կանանց և տղամարդկանց հարաբերակցությունը, համայնքային ենթակայության կազմակերպություններում ղեկավար կանանց և ղեկավար տղամարդկանց հարաբերակցությունը, համայնքի զարգացման քառամյա ծրագրում ընդգրկված

գենդերային ծրագրերի կամ միջոցառումների քանակը, համայնքային 2011 թ. բյուջեում գենդերային ծրագրերի կամ միջոցառումների վրա կատարված փաստացի ծախսերի տեսակարար կշիռը:

Մրցանակը ՀՀ վարչապետի «Լավագույն քաղաքապետ՝ գենդերային խնդիրների լուծման ուղղությամբ» և «Լավագույն գյուղապետ՝ գենդերային խնդիրների լուծման ուղղությամբ» պատվոգրերն են:

ՀՀ կառավարությունը 2008-2012թթ. գործունեության միջոցառումների ծրագրում գենդերային հավասարությունը՝ հասարակական, քաղաքական և տնտեսական ոլորտներում կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների և հավասար հնարավորությունների ապահովումը, ճանաչել է որպես քաղաքականության առաջնահերթ ուղղություն:

ՀԱՅԵՑԱՎԱՐԳ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՎԱՆՈՒԹՅԱՆ



Ստորև ներկայացնում ենք մրցանակաբաշխության արդյունքները

Գենդերային խնդիրների լուծման ուղղությամբ անվանակարգում լավագույն քաղաքայետ է ծանաչվել՝

ՀՀ Արարատի մարզի Արտաշատ քաղաքային համայնքի ղեկավար Գագիկ Մուրադյանը 1-ին տեղ,

ՀՀ Լոռու մարզի Վանաձոր քաղաքային համայնքի ղեկավար Սամվել Դարբինյանը 2-րդ տեղ,

ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքային համայնքի ղեկավար Գևորգ Մալխասյանը 3-րդ տեղ:

.....

Համայնքի ավագանու կազմում կանանց և տղամարդկանց հարաբերակցության ցուցանիշով լավագույն գյուղապետ են ծանաչվել՝

ՀՀ Լոռու մարզի Մեծավան գյուղական համայնքի ղեկավար Սերյոժա Վարդանյանը, 1-ին տեղ,

ՀՀ Սյունիքի մարզի Շրվենանց գյուղական համայնքի ղեկավար Արմինե Մանուկյանը, 2-րդ տեղ,

ՀՀ Գեղարքունիքի մարզի Ջաղացաձոր գյուղական համայնքի ղեկավար Մանվել Մինասյանը, 3-րդ տեղ:

.....

Համայնքային ենթակայության կազմակերպություններում ղեկավար կանանց և ղեկավար տղամարդկանց հարաբերակցության ցուցանիշով հաղթող են ծանաչվել՝

ՀՀ Արագածոտնի մարզի Ուջան գյուղական համայնքի ղեկավար Առաքել Հարոյանը, 1-ին տեղ,

ՀՀ Կոտայքի մարզի Նոր Երզնկա գյուղական համայնքի ղեկավար Ալինա Հարությունյանը, 2-րդ տեղ,

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարսեր գյուղական համայնքի ղեկավար Ջավեն Հարությունյանը, 3-րդ տեղ:

.....

Համայնքի զարգացման քառամյա ծրագրում ընդգրկված գենդերային ծրագրերի և/կամ միջոցառումների քանակի ցուցանիշով հաղթող են ծանաչվել՝

ՀՀ Վայոց ձորի մարզի Աղավնաձոր գյուղական համայնքի ղեկավար Աշոտ Գալստյանը, 1-ին տեղ,

ՀՀ Շիրակի մարզի Արեգնադեն գյուղական համայնքի ղեկավար Աղունիկ Հազրյանը, 2-րդ տեղ,

ՀՀ Արարատի մարզի Վերին Դվին գյուղական համայնքի ղեկավար Լյուդմիլա Պետրովան, 3-րդ տեղ:

.....

Համայնքային 2011 թ. բյուջեում գենդերային ծրագրերի կամ միջոցառումների վրա կատարված փաստացի ծախսերի տեսակարար կշռի ցուցանիշով հաղթող են ծանաչվել՝

ՀՀ Վայոց ձորի մարզի Մալիշկա գյուղական համայնքի ղեկավար Միեր Սովսիսյանը, 1-ին տեղ,

ՀՀ Արմավիրի մարզի Քարակերտ գյուղական համայնքի ղեկավար Միեր Հարթենյանը, 2-րդ տեղ,

ՀՀ Շիրակի մարզի Ախուրիկ գյուղական համայնքի ղեկավար Վարդիթեր Գասպարյանը, 3-րդ տեղ:



ՄՐՑԱՆԱԿ ՍԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻՆ



Արմենուհի Ղուկասյան,
*Ասոցիացիայի Սևանի մասնաճյուղի փոխնախագահ,
Սևան համայնքի ղեկավարի աշխատակազմի գլխավոր մասնագետ*

Մայրության և գեղեցկության տոնի նախօրյակին Ա. Խաչատրյանի տուն-բանգարանում տեղի ունեցավ վարչապետին կից կանանց խորհրդի նիստ, որի ընթացքում էլ հայտարարվեցին տարբեր անվանակարգերում մրցանակաբաշխության արդյունքները:

Հանրապետության զգալի թվով համայնքներ (քաղաքային և գյուղական) հայտ էին ներկայացրել՝ մասնակցելու մրցույթին: «Լավագույն քաղաքապետ՝ գեոդերային հիմնախնդիրների լուծման ուղղությամբ» անվանակարգում վարչապետ Տիգրան Սարգսյանը մրցանակ շնորհեց Սևանի քաղաքապետ Գևորգ Մալխասյանին:

Սևան համայնքում գեոդերային հիմնախնդիրների բացահայտման, դրանց լուծման, գործնական ծրագրերի իրականացման ուղղությամբ արձանագրված հաջողությունները տեսանելի են:

Կանանց և տղամարդկանց հավասար հնարավորությունների ապահովման, գեոդերային զգայուն քաղաքականության մշակման միջոցով հնարավորություն է ընձեռվում ապահովելու կանանց մուտքը տարբեր ոլորտներ, ստեղծելու նրանց համար բարենապաստ միջավայր:

Քաղաքապետարան-քաղաքացիական հասարակություն համագործակցության ճանապարհին համայնքում իրականացվել են մի շարք համաժողովներ, կլոր սեղաններ, հանդիպումներ Սևան համայնքում երիտասարդ կանանց քաղաքացիական ակտիվացման խթանման, կանանց քաղաքացիական նախաձեռնությունների, աշխատանքային շուկայի գեոդերային տեսանկյունների բացահայտման, կանանց ներուժը՝ ի նպաստ համայնքի օգտագործման, կանանց լիդերության առանձնահատկությունների ուսումնասիրման և այլ թեմաներով:

Ի դեպ, համայնքում շուտով կմշակվի գեոդերային քաղաքականության իրականացման ծրագիր, որն առավել համակարգված կդարձնի այդ ոլորտում կատարվող աշխատանքները:

Գեոդերային հիմնահարցը չի սահմանափակվում մեկ կամ երկու համայնքով. այն գոյություն ունի ողջ հասարակության և պետության մեջ, պահանջում է համապատասխան մոտեցում:

Կանանց խորհրդի կողմից ներկայացված այս նախաձեռնությունը կարևոր քայլ է՝ առավել հետևողական լինելու գեոդերային ուղղությամբ մշակվող ծրագրերը հասցեական և նպատակային դարձնելու համար, որը կրելու է շարունակական բնույթ:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽԹԱՆՈՂ ՕՐԻՆԱԿ



Անուշ Մարգարյան
«Արարատ» թերթի լրագրող

Կնոջ և տղամարդու հավասար իրավունքների մասին շատ է խոսվում: Այդ խնդիրը գալիս է վաղ ժամանակներից և մինչ այսօր էլ քննարկումների տեղիք է տալիս: Խնդրով զբաղվում են ոչ միայն հասարակական կազմակերպությունները, տեղական ինքնակառավարման մարմինները, այլև պետական ատյանները:

Արտաշատի քաղաքապետարանում այդ ուղղությամբ կատարվել են որոշակի աշխատանքներ, ինչի համար ՀՀ վարչապետի «Լավագույն քաղաքապետ՝ գեոդերային խնդիրների լուծման ուղղությամբ» մրցանակաբաշխությունում հաղթող է ճանաչվել քաղաքապետ Գագիկ Մուրադյանը:

- Նախ՝ շնորհակալություն են ուզում հայտնել այս մրցանակաբաշխության համար: Իհարկե, սա պատահական չէ, այս ուղղությամբ աշխատանքներ կատարվել են մեր քաղաքում: Քաղաքապետարանի աշխատակազմի 50 տոկոսից ավելին կանայք են, ունենք նաև ավա-



զանու մեկ կին անդամ: Սեպտեմբեր ամսին մեր քաղաքում ավագանու ընտրություններ են, կարծում եմ՝ կանանց թիվը կավելանա: Ինչ վերաբերում է գենդերային հավասարությանը, այն շատ եմ գնահատում և կարծում եմ, որ դեռ շատ անելիքներ ունենք այս ուղղությամբ: Հայ կինը միշտ եղել է տղամարդու կողքին նրա ուրախ և տխուր պահերին,- ասաց նա իր ելույթում:

Քաղաքապետին պատվոգիրը հանձնեց համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի նախագահ Ջենմա Հասարայանը՝ նշելով, որ ծրագիրը լայնածավալ է իր բնույթով: Այն իրականացվում է «Արևելյան գործընկերություն» ծրագրի շրջանակներում և հաստատվել է հանրապետության նախագահի կողմից:

- Գենդերային քաղաքականությունը մեզանում իրականացվում է 2010 թվականից, հաստատվել են քաղաքականության հայեցակարգը, ռազմավարությունը և խնդիրները,- ասաց տիկին Հասարայանը: Բոլոր մարզպետարաններում ստեղծվել են հանձնաժողովներ, որտեղ ընդգրկված են պետական, տեղական ինքնակառավարման և հասարակական կազմակերպություններ: Մեր նպատակը հավասարակշռության ստեղծումն է բոլոր մակարդակներում: Աշխարհի պրակտիկան ցույց է տվել, որ այնտեղ, որտեղ հավասարակշռված են ներկայացված կանայք և տղամարդիկ, որոշումների կայացման համակարգը օպտիմալ է:

Իր գնահատականը տվեց նաև ավագանու կին անդամ Հերիքնազ Նազարյանը: Նրա կարծիքով՝ կանայք իրենք պետք է առաջ մղվեն՝ չստեղծելով իրենց համար խոչընդոտներ:

ՀՀ Շիրակի մարզի Արեգնադեմ համայնքի գյուղապետարանը համագործակցել է Շիրակի հասարակական կազմակերպությունների միության հետ, ստեղծվել է կանանց խումբ քաղկացած վեց հոգուց, համայնքում անցկացվել են սեմինարներ «Կինը և քաղաքականությունը», «Խտրականություն կանանց նկատմամբ», «Բյուջետային գործընթացում կնոջ դերի բարձրացումը», «Կին լիդեր» թեմաներով: «Կանաչ արահետ» ՀԿ-ի հետ իրականացվել է և ընթացքի մեջ է «Աջակցություն գյուղի կնոջը» ծրագիրը:

Համայնքում հաճախ են կազմակերպվել հանդիպումներ կանանց հետ, համանքի ղեկավարը անցկացրել է սեմինարներ «Կնոջ դերը հասարակության մեջ և ընտանիքում», «Ինչպես բարձրացնել կանանց ակտիվությունը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում» թեմաներով:

Համայնքի ներկայացուցիչները մասնակցել են Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի Գյումրու մասնաճյուղի կողմից կազմակերպված միջոցառումներին, ինչպես նաև Գյումրիում կայացած «Կանանց մտավոր ներուժն ի նպաստ ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության կայացման» հանրապետական ակցիային:

Համայնքի 2011 թ. բյուջեում գենդերային ծրագրերի և միջոցառումների վրա կատարված փաստացի ծախսերը կազմել են 100.0 հազար դրամ:



Արեգնադեմ համայնքի ղեկավար Ադունիկ Հազրյանը

ծնվել է Վրաստանի Հանրապետության Գանձա գյուղում, ավարտել տեղի միջնակարգ դպրոցը, Տերնուպոլի ազգային տնտեսագիտական համալսարանի երևանյան մասնաճյուղի հաշվառում և աուդիտ ֆակուլտետը: Աշխատել է Գանձայի մսակաթնային սովխոզում որպես բանվորուհի, Թբիլիսիում՝ Վրաստանի կոմկուսի Կենտկոմի հրատարակչությունում՝ որպես գրաշար, Բոգդանովկայի կենտրոնական գրադարանի Գանձայի մասնաճյուղում՝ որպես գրադարանի վարիչ, Գանձայի կուլտուրայի տանը՝ որպես գեղմասվար, Արեգնադեմի կուլտուրայի տանը՝ որպես գեղմասվար, ապա տնօրեն, Արեգնադեմի գյուղապետարանում՝ որպես աշխատակազմի քարտուղար:

2005-ից Արեգնադեմի համայնքի ղեկավարն է:

Ադունիկ Հազրյանը «Օրինաց երկիր» կուսակցության անդամ է, ամուսնացած է, ունի մեկ որդի և երկու դուստր:



ՀՀ Շիրակի մարզի Ախուրիկի գյուղական համայնքի զարգացման քառամյա ծրագրում ընդգրկված են գենդերային նախագծեր և միջոցառումներ: Մասնավորապես «Օրսֆամ» ՄԲԿ-ի հայաստանյան մասնաճյուղի հետ կազմակերպվել են «Կանայք և ՏԻՄ ընտրությունները» և «Խելք խելքի տանք կանանցով կանանց համար» թեմաներով միջոցառումներ, նույն «Օրսֆամ» ՄԲԿ-ի աջակցությամբ համայնքում ստեղծվել են համայնքի ինքնօգնության և առաջնորդ կանանց ակտիվ խմբեր, Շիրակի հասարակական կազմակերպությունների միության հետ համայնքում կազմակերպվել է «Կանայք քաղաքականության մեջ» թեմայով միջոցառում: Մարզպետարանի գենդերային հիմնահարցերով զբաղվող հանձնաժողովի և հասարակական կազմակերպությունների համագործակցությամբ անցկացվել են կրթ-սեղաններ և դասընթացներ:

Համայնքի 2011 թ. բյուջեում գենդերային ծրագրերի և միջոցառումների վրա կատարված փաստացի ծախսերը կազմել են 400.0 հազար դրամ:



Ախուրիկ համայնքի ղեկավար Վարդիթեր Գասպարյանը

ծնվել է նույն գյուղում, ավարտել տեղի միջնակարգ դպրոցը, Երևանի անասնաբուժական-անասնաբուժական ինս-

տիտուտի կաթի-կաթնամթերքների ֆակուլտետը: Աշխատել է Ախուրյանի կաթի գործարանում որպես արտադրության պետ, գլխավոր ինժեներ, Ախուրիկի խորհրդային տնտեսությունում՝ որպես տնօրեն, Ախուրյանի շրջխորհրդի գործկոմում՝ քարտուղար, ՀՀ Շիրակի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչությունում՝ առաջատար մասնագետ:

2009 թ. ընտրվել է ՀՀ Շիրակի մարզի Ախուրիկ համայնքի ղեկավար:

Վարդիթեր Գասպարյանը Հայաստանի հանրապետական կուսակցության անդամ է, ամուսնացած է, ունի երկու դուստր և մեկ որդի:



Սևանի քաղաքապետ Գևորգ Մալխասյանը

ծնվել է Սևան քաղաքում, ավարտել է Խ. Աբովյանի անվան թիվ 1 միջնակարգ դպրոցը, Երևանի Ալ. Թամանյանի անվան շինարարական տեխնիկումը՝ ստանալով հիդրոտեխնիկի մասնագիտություն, Մոսկ-

վայի բիզնեսի և քաղաքականության ինստիտուտի «Իրավաբանություն և իրավագիտություն» ֆակուլտետը՝ ստանալով իրավագետի որակավորում: Ծառայել է խորհրդային բանակում: Ստացել է Ռուսաստանի բնական և հասարակական գիտությունների Հայաստանի մասնաճյուղի պատվավոր դոկտորի կոչում:

Ընտրվել է նույն մասնաճյուղի ակադեմիայի իսկական անդամ:

Աշխատել է Սևանի հացամթերքների արտադրական միավորումում որպես վարպետ, գործադիր տնօրեն:

2005-ից Սևանի զբոսաշրջության ասոցիացիայի նախագահն է:

2002-ից մինչ օրս Սևան համայնքի ղեկավարն է:

Պարգևատրվել է «Անանիա Շիրակացի» մեդալով: ՀՀ տարածքային կառավարման նախարար Հ. Աբրահամյանի կողմից՝ հուշամեդալով՝ ՏԻՄ-երի ստեղծման 11-ամյակի և համայնքային կյանքում ունեցած նշանակալից ներդրման համար: Ֆրանսիայի Գրենոբլ քաղաքի քաղաքապետ Մ. Դեստոյի կողմից պարգևատրվել է Ոսկե հուշամեդալով լավագույն համագործակցության համար: Աշխատանքային լավագույն գործունեության, համայնքապահպան ձեռնարկների, ապակենտրոնացված հարաբերությունների ոլորտում ունեցած զգալի ավանդի համար միջազգային և տեղական կազմակերպությունների, տարածաշրջանային մի շարք խորհուրդների և ընկերությունների կողմից պարգևատրվել է դիպլոմներով, շնորհակալագրերով, պատվոգրերով, հուշամեդալներով:

Գևորգ Մալխասյանը Հայաստանի հանրապետական կուսակցության անդամ է, ամուսնացած է, ունի 3 զավակ և մեկ թոռնիկ:



**Արտաշատի քաղաքապետ
Գագիկ Մուրադյանը**

Ծնվել է Արտաշատ քաղաքում, ավարտել է Երևանի գյուղատնտեսական ինստիտուտը: Ծառայել է խորհրդային բանակում, ունի պահեստի փոխգնդապետի կոչում:

Աշխատել է որպես գյուղաշխատողների արհմիության շրջկոմի տնտեսագետ, ՀԼԿԵՄ Արտաշատի շրջկոմի հրահանգիչ, կազմբաժնի վարիչ, ՀԿԿ Արտաշատի շրջկոմի

կազմբաժնի վարիչ, «Արման» գյուղատնտեսական կոոպերատիվում, Արտաշատի գինու-կոնյակի գործարանում՝ որպես տեխնոլոգ, արտադրամասի պետ, «ԴՎԻՆ» ՓԲԸ փոխտնօրեն, Արարատի մարզպետի խորհրդական:

2001-ից ընտրվել է Արտաշատի քաղաքապետ:

Պարգևատրվել է «Անանիա Շիրակացի» մեդալով:

Գագիկ Մուրադյանը Հայաստանի հանրապետական կուսակցության անդամ է, ամուսնացած է, ունի երկու որդի:



Վանաձորի քաղաքապետ Սամվել Դարբինյանը

Ծնվել է Վանաձորում (Կիրովականում): Ավարտել է Կիրովականի թիվ 17 միջնակարգ դպրոցը, Պ.Մելքոնյանի անվան շինարարական տեխնիկումը, ԵրՊԻ Կիրովականի մասնաճյուղի շինարարական ֆակուլտետը:

Աշխատել է «Գյուղշին» տրեստում որպես աշխույժ, ապա շինտեղամասի պետ, «Սպիտակշին» տրեստում՝ շինվարչության պետ, Գուգարքի ճանապարհների շինարարական թիվ 2 ձեռնարկությունում՝ որպես (ՃՇՁ 2) տնօրեն, Լոռու միավորված ՃՇՇՊՁ-ում՝ գլխավոր տնօրեն:

1999-ից ընտրվել է Վանաձորի քաղաքապետ: 2002-ին, 2005-ին 2008-ին վերընտրվել է նույն պաշտոնում:

Ստացել «Անանիա Շիրակացի» մեդալ, ՀՀ վարչապետի հուշամեդալ, Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինի մեդալ, Համայնքների միության հուշամեդալ, բազմաթիվ պատվոգրեր ու շնորհակալագրեր:

Սամվել Դարբինյանը Հայաստանի հանրապետական կուսակցության անդամ է, ՀՀԿ Վանաձորի տարածքային կազմակերպության խորհրդի նախագահ: Ամուսնացած է, ունի երեք զավակ, չորս թոռ:

Արարատի մարզի Վերին ԴՎԻՆ համայնքում գեներալին հավասարություն թեմայով կազմակերպվել են մի շարք միջոցառումներ՝ համայնքի ասորի և հայ բնակիչների մշակութային երկխոսություն-քննարկում նվիրված գեներալին հավասարության գաղափարներին, կրթական, որտեղ քննարկվել են գեներալին հավասարության հասնելու ճանապարհին առաջացած խոչընդոտները և գեներալին խտրականության հաղթահարման ուղիները: Մարտի 8-ի միջոցառումների ընթացքում քննարկվել է քաղաքական դաշտի անհասանելիությունը կանանց համար:

Վերին ԴՎԻՆ համայնքի ղեկավար Լյուդմիլա Պետրովան ծնվել է Արտաշատի շրջանի Վերին ԴՎԻՆ գյուղում, ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, Երևանի գյուղատնտեսական ինստիտուտը:

Աշխատել է Վ.ԴՎԻՆում որպես կոմերիտմիության ազատված քարտուղար, համայնքի աշխատակազմի քարտուղար:

2004-ից Արարատի մարզի Վ.ԴՎԻՆ համայնքի ղեկավարն է:

Լյուդմիլա Պետրովան անկուսակցական է, ամուսնացած է, ունի երեք երեխա:

ՀՀ Վայոց ձորի մարզի Մալիշկայի քաղաքային համայնքի զարգացման քառամյա ծրագրում ընդգրկվել և իրականացվել են հետևյալ գեներալին ծրագրերն ու միջոցառումները. Կանանց միասնակ, հանրային քննարկում գեներալին բռնության և գեներալին իրազեկման խնդիրների շուրջ, կանանց զբաղվածությունն ապահովող ՓՄՁ-ների զարգացմանն ուղղված ծրագրեր:

Մալիշկա համայնքի ղեկավար՝ Միեր Մովսիսյան:



ՀՀ Գեղարքունիքի մարզի Ջաղացաձոր համայնքի ղեկավարի նախաձեռնությամբ և համայնքի բնակչության օգնությամբ, համայնքի սուղ միջոցների հաշվին կատարվել են որոշակի աշխատանքներ: Իրականացվել են համայնքի ճանապարհների, ոռոգման ցանցի, խմելու ջրագծի վերանորոգումներ, այդպիսով մասնակիորեն լուծվել է կարիքավոր և տնտեսապես անապահով վիճակում գտնվող ընտանիքներին աշխատանքով ապահովելու հիմնախնդիրը: Սակայն համայնքի ֆինանսական միջոցները դեռևս չեն բավարարում համայնքում առկա մի շարք հիմնախնդիրների լուծման համար:

Համայնքում գործում է բուժկետ, գրադարան և դպրոց, որը միացված է համացանցին:

Համայնքում կանանց թիվը կազմում է 105, որից աշխատունակ են 80-ը, գրադարանում աշխատում են՝ 2, դպրոցում՝ 12 կանայք: Բուժկետում աշխատում է բուժքույր: Համայնքի ավագանու 4 անդամներից 2-ը կին են, որոնք ակտիվ գործունեություն են ծավալում համայնքի սոցիալ տնտեսական զարգացման ոլորտում:

Համայնքի քառամյա զարգացման ծրագրի ընթացքում նախատեսվել է համայնքի խմելու ջրի նոր ջրագծի կառուցում և ոռոգման ցանցի մասնակի վերանորոգում:

Ջաղացաձոր համայնքի ղեկավար Մանվել Մինասյանը ծնվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքում, ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, Կամոյի անասնաբուժական-անասնաբուժական տեխնիկումը, ծառայել է սովետական բանակում: Աշխատել է Վարդենիսի պանրագործարանում որպես բանվոր, Մարիադուր գյուղի կուլտնտեսությունում որպես պահեստապետ: 1999 թ. ընտրվել է Ջաղացաձոր համայնքի ղեկավար և մինչև օրս այդ պաշտոնում է:

Մանվել Մինասյանը Հայաստանի հանրապետական կուսակցության անդամ է, ամուսնացած է, ունի 3 երեխա՝ 2 տղա, 1 աղջիկ:

ՀՀ Կոտայքի մարզի Նոր Երզնկա համայնքում ավագանու 7 անդամներից 2-ը կին են, գյուղապետարանի աշխատակազմում՝ 10 աշխատակցից 6-ը, ինչպես նաև՝ համայնքի մսուր-մանկապարտեզի և մշակույթի տան տնօրենները: Համայնքի 7 անհատ ձեռներեցներից 5-ը կանայք են, որոնք իրենց գործունեությունը ծավալում են մանրածախ առևտրում: Գյուղատնտեսական վարկերից օգտվում է 109 շահառու, որոնցից 52-ը կանայք են, նրանք զբաղված են գյուղմթերքների արտադրությամբ:

Մարզի զենդերային հարցերով զբաղվող մշտական հանձնաժողովի հետ կազմակերպվել է թեմատիկ հանդիպում համայնքի ներկայացուցիչների մասնակցությամբ: «Վերջ բռնությանը կանանց նկատմամբ» քարոզարշավի շրջանակներում կազմակերպվել է հանդիպում համայնքի ակտիվ կանանց հետ: Համայնքի ներկայացուցիչները մասնակցել են Եղվարդի քաղաքապետարանում Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիայի կողմից «Նոր մարտահրավերներ և ռազմավարություն», «Քայլ առաջ դեպի կանանց քաղաքական մասնակցություն» ծրագրի շրջանակներում կազմակերպված կլոր սեղաններին:

2011-ից համայնքը համագործակցում է գյուղատնտեսության աջակցության «Կանաչ արահետ» հասարակական կազմակերպության հետ: Ամերիկյան դեսպանատան աջակցությամբ իրականացվում է «Կանաց կենտրոնների հզորացումը Հայաստանում ձեռներեցության զարգացման և աջակցության ցուցաբերման շնորհիվ» ծրագիրը, որի շրջանակներում կանանց խումբը կարտադրի առանց թունանյութերի մթերք, և կհայտնաբերվեն իրացման նոր շուկաներ: Համայնքը կստեղծի կենտրոն, որտեղ կանանց խմբի անդամները հնարավորություն կունենան հաճախակի հանդիպումներ կազմակերպելու և փոխանակելու իրենց ստացած գիտելիքներն ու փորձը: Կենտրոնը կհամալրվի նոր՝ գյուղատնտեսական և բնապահպանական գրականությամբ: Կստեղծվի նաև համակարգչային կենտրոն: Կանանց խմբի անդամները կփոխանցեն իրենց ստացած գիտելիքները համայնքի շահագրգիռ բնակչությանը:

Նոր Երզնկա համայնքի ղեկավար Ալինա Հարությունյանը ծնվել է Թալինի շրջանի Մաստարա գյուղում: Ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի կուլտուրայի ֆակուլտետը:



Աշխատել է Նաիրիի շրջանային կուլտուրայի տանը որպես մեթոդիստ, ավագ մեթոդիստ, ՀԼԿԵՄ Նաիրիի շրջկոմում՝ հաշվառման և վիճակագրական սեկտորի վարիչ, ՀԼԿԵՄ Նաիրիի շրջկոմի քարտուղար, ՀԵՄ Նաիրիի շրջանային խորհրդի նախագահի տեղակալ, Նաիրիի սոցիալական ծառայությունում՝ գլխավոր տեսուչ:

1996-ից Նոր Երզնկա համայնքի ղեկավարն է:



«Լավագույն կին գործարար» մրցանակաբաշխությունը

ՀՀ տնտեսական զարգացման բնագավառում կանանց ձեռնարկատիրական նախա-
ձեռնողականության խրախուսման, տնտեսության տարբեր ճյուղերում կին գոր-
ծարարների նվաճումների ըստ արժանվույն գնահատման, հանրահռչակման և սատարման
նպատակով ՀՀ վարչապետը հայտարարել է մրցանակաբաշխություն հետևյալ 4 ուղղու-
թյուններով.

1. «Լավագույն կին գործատու», որին կարող են մասնակցել միայն ՀՀ մարզերում (այսինքն՝ բացի Երևանից) ձեռնարկատիրական գործու-
նեություն իրականացնող կանայք (սեփականության իրավունքով 50% և ավելի բաժնեմաս ունենալու պարագայում): Մրցույթի հիմնական չափորոշիչներն են՝ աշխատատեղերի քանակը, աշխատողների ընդհանուր թվում կանանց բաժինը (%-ով), աշխատողների (բացառությամբ տնօրենի և փոխտնօրենների) միջին աշխատավարձը, թողարկված արտադրանքի ծավալը վերջին 3 տարում:

2. «Լավագույն կին նախաձեռնող», որին կարող են մասնակցել ՀՀ մարզերում և Երևան քաղաքում ձեռնարկատիրական գործունեու-
թյուն իրականացնող այն կանայք (սեփականության իրավունքով 50% և ավելի բաժնեմաս ունենալու պարագայում), որոնք նախաձեռնել և գրանցել են իրենց բիզնեսը 2010 թ. հուլիսի 1-ին և դրանից հետո ընկած ժամանակահատվածում: Մրցույթի հիմնական չափորոշիչներն են՝ տնտեսության ճյուղը, կատարված ներդրումների ծավալը, աշխատատեղերի քանակը, առաջին անգամ սեփական գործ հիմնելու հանգամանքը:

3. «Մարզի կին բարեգործ», որին կարող են մասնակցել միայն ՀՀ մարզերում (բացի Երևանից) ձեռնարկատիրական գործունեություն

իրականացնող կանայք (սեփականության իրավունքով 50% և ավելի բաժնեմաս ունենալու պարագայում): Մրցույթի հիմնական չափորոշիչներն են՝ բարեգործությանն ուղղված գումարը վերջին 3 տարում (%-ով զուտ եկամտի ընդամենը գումարի նկատմամբ), բարեգործության հիմնական ուղղվածությունը՝ շահառուները կամ ստացող կազմակերպությունները, պետական սոցիալական, ներառյալ՝ առողջապահական, կրթական, մշակութային և այլ ծրագրերին մասնակցությունը, շրջապատի կամ համայնքի տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացումը:

4. «Կին արտադրողի լավագույն ապրանքանիշ», որին կարող են մասնակցել ՀՀ մարզերում և Երևանում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կանայք (սեփականության իրավունքով 50% և ավելի բաժնեմաս ունենալու պարագայում): Մրցույթի հիմնական չափորոշիչներն են՝ ապրանքանիշի անվանումը, ապրանքանիշը կրող արտադրատեսակների անվանացանկը, ապրանքանիշի ներկայացվածությունը հանրապետության առևտրական ցանցերում (մաս արտասահմանում), ապրանքանիշը կրող ֆիրմային խանութի առկայությունը:

Մրցանակը Հայաստանի Հանրապետության վարչապետի պատվոգիրն է:

Գենդերային քաղաքականության հիմնական խնդիրներից է.

Ձևավորել էզալիտար գենդերային մշակույթ՝ հայրիշխանական կարծրատիպերի հաղթահարման համար և նպաստել հասարակական գիտակցության մեջ պետական կառավարման և հասարակական կյանքի այլ ոլորտներում կանանց և տղամարդկանց հավասար մասնակցության գաղափարախոսության դրական ընկալմանը:

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ



ՁԵՐ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՍՅԵՆ

Գեղարքունիքի մարզի Վարսեր համայնքի ներկայացուցչական մարմնի՝ ավագանու 7 անդամների թվում կին չկա, սակայն համայնքի գյուղապետարանում և նրա ենթակա կառույցներում աշխատանքի տեղերի մեծ մասը զբաղեցնում են կանաք:

Համայնքում մշտապես ղեկավարության ուշադրության են արժանանում կանաք, որոնց իրավունքների պաշտպանությունն ու նրանց առջև ծառայած խնդիրները լուծվում են անմիջապես:

Համայնքն ունի մշտական ջոր, որի շնորհիվ կանանց ծանրաբեռնվածությունը զգալի նվազել է:

Մարզպետարանի և կառավարության կողմից ձեռնարկված միջոցներով և շուրջ 450 000 մլն դրամ ներդրումով իրականացվել են համայնքի ճանապարհների և 34 մլն դրամ ներդրումով համայնքի կուլտուրայի տան վերանորոգումը: Այս աշխատանքներին մասնակցել են նաև համայնքի կանաք:

Վարսեր համայնքի ղեկավար Չավեն Հարությունյանը ծնվել Վարսեր գյուղում, սովորել է տեղի միջնակարգ դպրոցում, ավարտել Կամոյի սովխտոկ տեխնիկումը՝ ստանալով անասնաբույժի որակավորում, Երևանի էկոլոգիայի տնտեսագիտության և իրավունքի հայկական ինստիտուտը՝ ստանալով ֆինանսների և կրեդիտի գծով տնտեսագետի որակավորում: Ծառայել է խորհրդային բանակում:

Աշխատել է Սևանի սովխտոգում, որպես սերմնավորող տեխնիկ, ապա որպես գլխավոր գոտեխնիկ: Այնուհետև աշխատել է Վարսերի ԳՏԶ-ում որպես տնօրեն, Վարսերի սերմնաբուծական տնտեսության տնօրեն:

2002-ից Վարսեր համայնքի ղեկավարն է:

Չավեն Հարությունյանը Հայաստանի հանրապետական կուսակցության անդամ է, ամուսնացած է, ունի երկու զավակ և մեկ թոռ:



«Հ վարչապետին կից գործող կանանց հասարակական խորհրդի նախաձեռնությամբ կազմակերպված մրցանակաբաշխությունն իր տեսակի մեջ եզակի է և «բացահայտումներ» անելու լավագույն հնարավորություն ընձեռեց: Ի թիվս մի շարք անվանակարգերի, հայրարարված էր նաև մրցանակաբաշխություն «Կին նախաձեռնող» անվանակարգում, որի մրցանակակիրն ու հասցեատերը սևանաբնակ

մանակաբարձ-գինեկոլոգ Լիաննա Ալավերդյանն էր:

Նրա հետ գրուցեցինք մրցույթի, մրցանակի արժանացած ձեռնարկի մտահղացման, հետագա անելիքների և առհասարակ կանանց առողջության շուրջ:

- «Մրցույթի մասին տեղեկացա Փոքր և միջին ձեռնակատիրության զարգացման գրասենյակից: Սկզբում կար թերահավատություն, այնուամենայնիվ մասնակցեցի՝ ներկայացնելով ուլտրաձայնային հետազոտության կաբինետի ստեղծումը, իմ կողմից կատարված ներդրումները, գործունեության առաջին քայլերը, որին հետևեց հավելյալ տեղեկատվության տրամադրումը մրցութային հանձնախմբին: Օրեր անց արդեն 1-ին մրցանակակիրների շարքում էի, ճանաչվել էի «Կին-նախաձեռնող» անվանակարգի հաղթող, և վարչապետի կողմից պատվոգիր ստացա: Հետագայում պարզվեց, որ իմ նախաձեռնությունը և ընդհանրապես առողջապահական ոլորտ ներկայացնելը եղել է եզակի:

Սևանի պոլիկլինիկայում աշխատել են գրեթե 10 տարի, միաժամանակ, համատեղության կարգով, աշխատել են նաև հոգեբուժական հիվանդանոցում: Ունեցածս փորձը, գիտելիքները հետագայում ևս օգտագործելու համար անհրաժեշտ էր ասպարեզ: Կարճ ժամանակ անց գտա լավագույն տարբերակն իմ այցելուներին կրկին հանդիպելու, նրանց օգտակար լինելու համար: Սկզբում մտածում էի, որ կաբինետը պետք է լինի քաղաքի համեմատաբար բանուկ մասում, սակայն ստեղծեցի իմը, որի շինարարությունը տևեց մեկ տարի, և այսօր կարող եմ արձանագրել, որ ուլտրաձայնային հետազոտության կաբինետը՝ ապահովված ժամանակակից բուժսարքավորմամբ, առկա հարմարավետ պայմաններով, բացել է իր դռները ոչ միայն Սևանի, այլև տարածաշրջանի, հարակից քաղաքների բնակիչների առաջ: Մարդիկ ավելի հեշտ են այցելում այստեղ՝ խնայելով և՛ ժամանակը, և՛ միջոցները, միաժամանակ ձերբազատվելով հոգեբանական բարդույթներից:



- Ուրախալի է, որ մայրաքաղաքային մենաշնորհները հասնում են նաև փոքր քաղաքներ՝ այցելուներին և հիվանդներին ազատելով մի շարք խնդիրներից: Այս կաթինետ այցելողներին ինչո՞վ կարող եք օգտակար լինել, և ի՞նչ պիտի ակնկալեն նրանք:

- Մասնագիտությամբ մանկաբարձ-գինեկոլոգ եմ, մասնագիտացել եմ որպես սոնոգրաֆիստ, անցել եմ վերապատրաստման, որակավորման մի շարք դասընթացներ: Աշխատում եմ ախտորոշման մեծ հնարավորություններ ունեցող սարքավորմամբ, որի միջոցով կատարվում է ներքին օրգանների, մակերեսային (վահանաձև գեղձ և կրծքագեղձ), ներհետոցային հետազոտություն: Ժամանակակից պահանջներին բավարարող սարքավորմանը զուգահեռ կարևորում եմ մասնագետի մասնագիտական պատրաստվածության աստիճանը, որովհետև միայն այդ դեպքում կլինիկական և սոնոգրաֆիկ պատկերի համադրումը տալիս է ճշգիրտ արդյունք: Իմ աշխատանքի ընթացքում հիվանդության ախտորոշմանը հետևում եմ համապատասխան խորհուրդները, լրացուցիչ ուղղորդումները:

- Ունե՞ք վիճակագրություն հիվանդությունների տարածվածության և դրանց երիտասարդացման վերաբերյալ:

- Կոնկրետ թվային վիճակագրություն չեմ կարող ներկայացնել, սակայն ցավով պետք է նշեմ, որ նկատվում է մի շարք հիվանդությունների երիտասարդացում: Մարզում բավական բարձր է կրծքագեղձի հիվանդությունների թիվը. անգամ 20-25 տարեկաններն են արդեն բախվում այս խնդրին: Նշեմ նաև վահանաձև գեղձի հետ կապված մի շարք հիվանդությունների տարածվածությունը: Ուռուցքային հիվանդությունների թիվն աճի միտում ունի, որոնց զարգացման և աճի համար «բարենպաստ» միջավայր են սթրեսներն ու հորմոնալ տեղաշարժերը: Խնդիրը մեկն է՝ դրանք հայտնաբերել որքան կարելի է վաղ և չթողնել՝ հիվանդությունը խորանա:

- Որքանո՞վ է հաջողվում այդ հիվանդությունների վաղ հայտնաբերումը, կամ կանայք որքանո՞վ են նախանձախնդիր իրենց առողջության պահպանման գործում: Չէ՞ որ հաճախ «դաժան դատավճիռ» լսելու վախը դանակը հասցնում է ոսկորին:

- Նախ՝ փորձենք գնահատել կանանց վերաբերմունքն իրենց առողջության նկատմամբ 5 բալանոց համակարգով: Կանանց 60%-ին գնահատում եմ 2 բալ, որոնք անհետևողական են, անուշադիր սեփական առողջության նկատմամբ: Գալիս են բժշկի մոտ այն ժամանակ, երբ հիվանդությունների կույտ է գոյանում: Կանանց 30%-ին գնահատում եմ 3-4 բալ: Միայն 10%-ը գնահատվում է 5: Խնդիրը նաև այն է, թե որքանով է կինը գիտակցում իր վիճակի լրջությունը, կամ գիտակցելուց հետո էլ ինչպիսին է լինում վերաբերմունքը, որը վերաբերմունք է նաև ընտանիքի և երեխաների նկատմամբ: Ըստ իս, եթե ժամանակին դիմեն բժշկի, դատավճռի մասին ընդհանրապես խոսք չի կարող:

- Ի՞նչ է պատահում հայ կնոջ առողջությանը, երբ նա հայտնվում է մենթալիտետի և առողջության խնդիրների խաչմերուկում:

- Մենթալիտետը հզոր գործոն է, որը հաճախ է զգացնել տա-

ՀՀ Վայոց ձորի մարզի Աղավնաձորի քաղաքային համայնքի զարգացման քառամյա ծրագրում ընդգրկվել և իրականացվել են գենդերային ծրագրեր ու միջոցառումներ՝ Կանանց միամսյակ, հանրային քննարկում գենդերային բռնության և գենդերային իրազեկման խնդիրների շուրջ, կանանց զբաղվածության խնդիրը լուծելու նպատակով՝ հանդիպում մարզի գործարարների հետ («Վեդի Ալկո», «Գետնատուն», «Քիմլեյ»), ինչպես նաև կանանց զբաղվածությունն ապահովող ՓՄՁ-ների զարգացմանն ուղղված ծրագրեր:



Աղավնաձոր համայնքի ղեկավար Աշոտ Գալստյանը ծնվել է Վայոց ձորի մարզի Աղավնաձոր գյուղում, ավարտել տեղի միջնակարգ դպրոցը, Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը, ծառայել է սովետական բանակում:

Աշխատել է ԵրԱԶ ավտոգործարանի Աղավնաձորի մասնաճյուղում որպես ինժեներ-տեխնոլոգ, զբաղվել է ձեռնարկատիրական գործունեությամբ՝ թարմ մրգի վերամշակմամբ, աշխատել է Հայքըմուդկոյուդու Վայոց ձորի մասնաճյուղում որպես գլխավոր ինժեներ:

2005 և 2008 թթ. ընտրվել է Աղավնաձորի համայնքի ղեկավար:

Աշոտ Գալստյանը Հայաստանի հանրապետական կուսակցության անդամ է, ամուսնացած է, ունի երեք երեխա:



լիս: Սակայն միաժամանակ նշեն, որ վերջին շրջանում նկատվում են դրա հաղթահարման իրական քայլեր, առաընթաց կա, որն ապահովվում է նաև տեղեկատվության շնորհիվ: Ես լավատես եմ: Գոհանում եմ իմ այցելուների ներքին կուլտուրայից, սեփական առողջության նկատմամբ նախանձախնդիր մոտեցումից:

- Ձեր կարծիքով՝ ֆինանսական խնդիրներն են պատճառը, ժամանակ չգտնելը, ամոթը, որ կինը խուսափում է դիմել մասնագետին:

- Հաճախ կանայք ժամանակ չունենալու պատճառաբանությամբ քողարկում են իրենց վախերը և ճնշվածությունը: Իհարկե, չեն բացառում նաև ֆինանսական կողմը, սակայն տեղում ախտորոշման կաբինետ ունենալը մատչելի է. այցելուները խնայում են և՛ ժամանակը, և՛ գումարը: Փաստեն, որ աղջիկների մեջ ամոթն առաջնային է: Անկախ կարգավիճակից՝ խնդիրը կա, որը պետք է լուծում ստանա: Սակայն ինքնապաշտպանական ռեակցիան՝ ոչ ոք չիմանա, հանկարծ չտեսնեն, ավելի է բարդացնում վիճակը:

- «Անգիտությամբ բախտավոր» ապրելու սինդրոմը դեռևս իշխող է, սակայն նկատվում է նաև, որ փոքր քաղաքներում տեղեկատվության տարածումն առավել արագ է կատարվում. գալիս է մեկը, ապա իր հետ բերում մի քանիսին:

- Փոքր քաղաքում աշխատելը և՛ դժվար է, և՛

հեշտ: Բարի համբավի ձեռքբերման դեպքում, որը աշխատանքի և մարդկային որակների շնորհիվ է ստեղծվում, կարողանում ես ունենալ քո այցելուն: Իսկ սխալվելու դեպքում էլ մարդիկ չեն ներում, խստապահանջ են: Մարդկանց վստահությունն ինձ պարտավորեցնում է: Ունեն պատասխանատվության մեծ զգացում, որը տարիների ընթացքում ավելի է մեծացել:

- Մեր գրույցի վերջում ավանդական մի հարց. ի՞նչ կմաղթեք Ձեր այցելուներին:

- Մեկ բառով՝ առողջություն: Իմ գործունեությունն էլ ուղղված է առողջության պահպանմանը: Հիշենք, որ 35 տարեկանից հետո սոնոգրաֆիական հետազոտությունը ոչ թե առաջնային է, այլ անհրաժեշտություն: Կյանքի որակի բարելավմանը նպաստող այս քայլը չպետք է համարել «տաժանակիր գործ» և ամենակարևորը՝ չվախենալ: Երբեք ավելորդ չեն, ավելին՝ պարտադիր են պրոֆիլակտիկ ստուգումները:

Սա մեր կյանքն է, ապրենք այն լիարժեք և կենսուրախ՝ չթողնելով, որ որևէ հիվանդություն իշխի մեր մարմնին և հոգուն:

Հարցազրույցը վարեց
Ասոցիացիայի Սևանի մասնաճյուղի փոխնախագահ,
Սևան համայնքի ղեկավարի աշխատակազմի
գլխավոր մասնագետ
Արմենուհի Ղուկասյանը

**Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիան երախտագիտություն է հայտնում
հեղինակներին հողվածները տրամադրելու համար**

«Համալսարանական կրթությամբ կանայք» լրատուի հավելվածը տպագրվում է «Կանանց քաղաքական մասնակցություն և քաղաքացիական նախաձեռնություններ. գենդերային հավասարությանը հասնելու հեռանկարները Հայաստանում» ծրագրի շրջանակներում «Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան»-ի աջակցությամբ

Համարը պատրաստել են **Չեմմա Հասրաթյանը, Իրինա Շահինյանը, Անահիտ Հարությունյանը**
Համարը խմբագրել է **Անահիտ Հարությունյանը**
Ձևավորումը՝ **Արթուր Բոյախյանի**

Համալսարանական կրթությամբ կանանց ասոցիացիա
Երևան 0002, Սարյան 22
Հեռ. (374 10) 53-68-02,
Ֆաքս (374 10) 53-67-92
Email: awue.armenia@gmail.com

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ»
հրատարակչության տպարանում:
Երևան, Սայաթ-Նովա 24 (գրասենյակ)
Հեռ. (374 10) 54-49-82, 62-38-63
Էլ.փոստ info@asoghik.am